


ПОЛИТИКА

Ռուսաստանի Դաշնության արտաքին քաղաքականության նոր հայեցակարգը. հիմնական դրույթների վերլուծություն

Բալասանյան Գրիգոր Ա.


*պ.գ.թ., Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի դոցենտ,
Երևանի պետական համալսարան (Երևան, ՀՀ)*

 <https://orcid.org/0009-0003-0133-669X>

grigorbalasanyan@mail.ru

Հակոբյան Էրիկ Ա.

*Մագիստրատուրայի ուսանող, Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ,
Երևանի պետական համալսարան (Երևան, ՀՀ)*

 <https://orcid.org/0009-0009-7491-0051>

erik.hakobyan.2020@gmail.com

ՀՏԳ՝ 341.1; EDN: QDQJWТ

DOI: 10.58587/18292437-2025.1-8

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ արտաքին քաղաքականություն, հայեցակարգ, քաղաքակրթություն, բազմաբևեռ աշխարհ, արտաքին քաղաքականության առաջնահերթություններ և ուղղություններ

The new concept of the foreign policy of the Russian Federation: analysis of the main provisions

Balasanyan Grigor A.

Candidate of Historical Sciences, Associate Professor of the Department of International Relations and Diplomacy, Yerevan State University (Yerevan, RA)

Hakobyan Erik A.

MA degree student, Faculty of International Relations, Yerevan State University (Yerevan, RA)

Abstract: The article examines the Foreign Policy Concept of the Russian Federation, approved by the President of Russia on March 31, 2023, by Decree No. 229. The main provisions of the document were analyzed, subjecting it to a comparative analysis with all previous versions of the concept, the problem area of the above-mentioned topic was also noted, expressed in a number of issues that were revealed as a result of analytical research conducted by the authors.

Keywords & phrases: foreign policy, concept, civilization, multipolar world, priorities and directions of foreign policy

Новая концепция внешней политики Российской Федерации. анализ основных положений

Баласанян Григор А.

*к.и.н., доцент кафедры Международных отношений и дипломатии,
Ереванский государственный университет (Ереван, РА)*

Акопян Эрик А.

*Студент магистратуры, Факультет международных отношений,
Ереванский государственный университет (Ереван, РА)*

Аннотация: В статье рассматривается Концепция внешней политики Российской Федерации, утвержденная Президентом России 31 марта 2023 года Указом № 229. Проанализированы основные положения документа, подвергнутые сравнительному анализу со всеми предыдущими версиями концепции, а также отмечено проблемное поле вышеуказанной темы, выраженное в ряде вопросов, которые были выявлены в результате аналитического исследования, проведенного авторами.

Ключевые слова и словосочетания: внешняя политика, концепция, цивилизация, многополярный мир, приоритеты и направления внешней политики

2023 թվականի մարտի վերջին Ռուսաստանի Անվտանգության խորհրդի մշտական անդամների խորհրդակցության ընթացքում, որը նախագահում էր ՌԴ նախագահ Վլադիմիր

Պուտինը, արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը իր ելույթի ընթացքում ներկայացրեց Ռուսաստանի Դաշնության արտաքին քաղաքականության հայեցակարգի նորացված տարբեր

րակը, որը հանդիսանում է Ռուսաստանի արտաքին քաղաքականության ամբողջական ուղղությունը սահմանող հիմնական ռազմավարական փաստաթուղթը [1]:

Նոր հայեցակարգի ընդունման հիմնական պատճառները

Պետության արտաքին քաղաքականության հայեցակարգի փոփոխությունների ներդրումն ու հետագա հաստատումը ինքնին կարևորագույն նշանակության և բնույթի իրադարձություն է, քանի որ փաստաթղթի պաշտոնական հրապարակման օրվան նախորդող ողջ գործընթացը բաղկացած է եղել բազմաթիվ ներքաղաքական գործոններից, որոնցից գլխավորն է հանդիսացել տարբեր էլիտար խմբերի միջև քաղաքական հակամարտությունը և պետության հետագա ներքաղաքական գծի սահմանման հարցում նրանց միջև կոնսենսուսի ձեռքբերումը [2]: Բացի ներքաղաքական իրողություններից, մեծ կարևորություն ունի նաև միջազգային քաղաքականության գործոնը: Արտաքին քաղաքականության գլխավոր փաստաթղթի ընդունումը մեկ կոնկրետ պետության կողմից ենթադրում է փոփոխություններ վերջինիս արտաքին քաղաքականության գործունեության մեջ, որոնք, համապատասխանաբար, ընկալվում են մյուս պետությունների կողմից, որոնք էլ, իրենց հերթին, ընկալվում են որպես միջազգային քաղաքական գործընթացի հիմնական պայմանական մասնակիցներ: Հաշվի առնելով Ռուսաստանի առանձնահատուկ աշխարհաքաղաքական դիրքը համաշխարհային ասպարեզում՝ նման իրադարձությունները միջազգային համայնքի անդամների կողմից առավել բարձր ուշադրության կենտրոնում են գտնվում:

Ընդհանուր առմամբ, պետք է նշել, որ ավելի քան երեսուն տարիների ընթացքում Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը ենթարկվել է բազմաթիվ կառուցվածքային փոփոխությունների, որոնցից մեկը Ռուսաստանի և հավաքական Արևմուտքի միջև միջպետական հարաբերությունների էական բարդացումն է եղել: Այնուամենայնիվ, ինչպես նշում են փորձագիտական քաղաքագիտության շրջանակների ներկայացուցիչները, ժամանակակից ռուսական արտաքին քաղաքականության բնորոշ առանձնահատկությունն իր ամբողջ գոյության ընթացքում եղել է Արևմուտքի երկրների գործողություններին արձագանքելը, ինչպես նաև միջազգային իրավակարգի պահպանման վերաբերյալ սեփական այլընտրանքային տեսակետի ձևավորումն ու պաշտպանությունը:

Որոշ շրջանակներ մատնանշում են, որ ռուսական արտաքին քաղաքականությունը փոփոխվել է առկա պայմանների ազդեցության ներքո և, որպես հետևանք, իր հնարավորու-

թյունների ու սահմանափակումների վերաբերյալ իրազեկվածության գնահատականի առավել բարձր մակարդակով [3]: Հարկ է ընդգծել, որ այդ պայմանների հիմքը մեծամասամբ փոխկապակցված է ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի շրջանակներում վերջինիս դաշնակիցների, ինչպես նաև Եվրոպական միության անդամ երկրների կողմից Ռուսաստանի նկատմամբ թշնամական գործողությունների հետ, ինչը բազմիցս դարձել է Ռուսաստանի արտաքին քաղաքականության հայեցակարգի փոփոխությունների հիմնական պատճառը: Որպես այլ հանգամանք առանձնացվում է համաշխարհային նոր կենտրոնների ձևավորման և գործոնների ուժեղացման համաշխարհային օբյեկտիվ միտումը, որը վերաբերում է այնպիսի երկրների միջազգային-քաղաքական և մակրոտնտեսական զարգացմանը, ինչպիսիք են Չինաստանը, Հնդկաստանը, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի և մյուս տարածաշրջանների երկրները, որոնք իրենց ազդեցության գոտիներում կարող են հանդիսանալ առանձին բևեռներ [4]:

Գլոբալիզացիայի նշանակությունը որպես հայեցակարգի առանձին դրույթ

Հայեցակարգում մեկ այլ դրույթով անդրադարձ է կատարվել նաև գլոբալացման գործընթացին: Վերջին շրջանում ռուսական արտաքին քաղաքականության խոսույթում ավելի ու ավելի հաճախ հնչում է այն կարծիքը, որ անհրաժեշտ է զարգացնել գլոբալացման գործընթացը, բայց ոչ այն սկզբունքներով ու առաջարկներով, որոնք ներկայացնում են ԱՄՆ-ը և արևմտյան մյուս երկրները: Ըստ ռուսական քաղաքական վերլուծական շրջանակների մոտեցման՝ այդ սկզբունքներն ու առաջարկները դիտարկվում են որպես սպառնալիք համաշխարհային անվտանգությանն ու կայուն զարգացմանը՝ կապված համաշխարհային ավանդական կրոնական, մշակութային, պատմական և աշխարհիկ արժեքների, ինչպես նաև ՄԱԿ-ի կանոնադրությամբ արտացոլված միասնական և անբաժանելի անվտանգության սկզբունքների կորստի հետ, որոնք ի սկզբանե ուղղված են եղել գլոբալ կայունության պահպանմանը: Նմանատիպ բացասական ազդեցությունը ենթադրում է «կանոնների վրա հիմնված կարգի» պահպանման կորուստ, որի դեպքում գլոբալ հարավի երկրներն ու հավաքական Արևմուտքի կազմում չգտնվող պետությունները ենթարկվում են շահագործման ազդեցության և բախվում արևմտյան պետությունների կողմից ձևավորված դժվարություններին, ինչի պատճառով, ՌԴ մոտեցման համաձայն, տեղի ունեցավ Ռուսաստանի հատուկ ռազմական գործողությունը Ուկրաինայում, որը սկսվեց 2022 թվականի փետրվարի 24-ին:

Հատուկ ռազմական գործողությունը ներկայումս դարձել է Ռուսաստանի և Արևմուտքի երկրների հարաբերությունների հիմնական խոչընդոտը. ռուսական կողմը հատուկ ռազմական գործողությունը չէր դիտարկում որպես հավաքական Արևմուտքի հետ հակամարտության միջոց, այլ որպես ուկրաինական հարցի լուծման նոր փուլ, որը 2014 թվականից առանձնահատուկ տեղ էր զբաղեցնում Ռուսաստանի քաղաքական օրակարգում:

Որպես Ռուսաստանի արտաքին քաղաքականության կուրսի փոփոխության գործոնների հիմնական պատճառներ, ընդհանուր առմամբ, կարելի է առանձնացնել հետևյալ իրողությունները.

- ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի շրջանակներում իր դաշնակիցների կողմից Ռուսաստանի նկատմամբ թշնամական գործողություններ, այդ թվում՝ հատուկ ռազմական գործողությանն ուղղված արձագանք, որը արտահայտվել է Ռուսաստանի նկատմամբ աննախադեպ քաղաքական և տնտեսական պատժամիջոցների տեսքով:

- Համաշխարհային քաղաքական անկայունություն, որը հանդիսանում է գլոբալացման հետևանք և արտահայտվում ահաբեկչական ու ծայրահեղական շարժումների աճով, ինչպես նաև համաշխարհային ավանդական հոգևոր-բարոյական արժեքներից հրաժարման միտումով:

Չուզահեռներ ՌԳ արտաքին քաղաքականության նախորդ հայեցակարգերի հետ

Եթե անդրադարձ է կատարվում Ռուսաստանի Դաշնության արտաքին քաղաքականության հայեցակարգի բովանդակությանը, կարող ենք փաստել, որ վերը նշված հանգամանքների պատճառով այն որոշ ժամանակահատվածներում էական փոփոխությունների ենթարկվեց: 1993 և 2000 թվականների տարբերակներում, որոնք ձևավորվել են ժամանակակից ռուսական պետականության զարգացման սկզբնային շրջանում, խոսվում էր Ռուսաստանի արտաքին քաղաքականությունում ազգային շահերի անքակտելի կարևոր դերի մասին, որի շուրջ պետք է կառուցվեր այդ քաղաքականությունը, որին զուգահեռ նշվում էր նաև ԱՄՆ-ի և նրա եվրոատլանտյան գործընկերների կողմից առաջ քաշվող միաբևեռ աշխարհի կառուցվածքի վտանգի մասին [5]: Այս համատեքստում որպես Ռուսաստանի արտաքին քաղաքականության առաջնահերթություն նշվում էր միջազգային կառույցների համագործակցությամբ Ռուսաստանի դիրքերի ամրապնդումը միջազգային համայնքում, որտեղ քաղաքական գործընթացների մոդերատորի դերակատարությունն առավելապես ԱՄՆ-ն էր կատարում [6]:

2008 թվականի հայեցակարգը դարձավ Ռուսաստանի արտաքին քաղաքական արձագանքը Հարավային Օսեթիայի իրադարձություններին: Այդ ժամանակ ռուսական քաղաքական օրակարգում հայտնվեց նարատիվ այն մասին, որ անհրաժեշտ է ավելացնել պետության իրական ուժը զինված ուժերի զարգացման և արդիականացման միջոցով՝ հաշվի առնելով ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունների լարվածության խորացումը [7]: 2013 թվականից սկսած՝ ռազմավարական փաստաթղթերում նշված գաղափարը, ըստ որի՝ Ռուսաստանը համարվում էր բազմաբևեռ աշխարհում ամենաազդեցիկ ուժային կենտրոններից մեկը, վերածվեց այն թեզի, որ Ռուսաստանը, որպես համաշխարհային խոշոր խաղացող, պատասխանատու է գլոբալ կայունության և անվտանգության պահպանման համար, ինչը իրականացնում է համաշխարհային քաղաքական բոլոր կենտրոնների, հատկապես Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրների, ինչպես նաև մի շարք արևմտյան պետությունների հետ երկխոսության միջոցով [8]: 2016 թվականի տարբերակը դարձավ նախորդ հայեցակարգերում առկա բոլոր մտքերի պաշտոնական ամրագրումը [9]:

Աշխարհաքաղաքական փոփոխություններն ու դրանց արդյունքում ձևավորված նոր իրողությունները հաշվի առնելով՝ վերջին փաստաթղթերում ռուսական արտաքին քաղաքականության հիմնական և սկզբունքային մոտեցումը դարձավ բազմաբևեռ աշխարհի ձևավորումը հենց այն պայմաններում, որոնցում գտնվում են Ռուսաստանն ու միջազգային համայնքը՝ շարունակելով երկխոսությունը բոլոր կողմերի հետ՝ չնայած լուրջ աշխարհաքաղաքական հակասություններին [10]: Միևնույն ժամանակ շեշտադրվում էր միջազգային համագործակցության կարևորությունը սկզբունքային բնույթի այնպիսի ուղղություններով, ինչպիսիք էին Սիրիայի և Ուկրաինայի հարցերի կարգավորումը [11]:

Ռուսաստանի արտաքին քաղաքականության հայեցակարգի վերջին տարբերակը լուրջ տարբերություններ ունի նախորդ բոլոր խմբագրությունների հետ: Գլխավոր տարբերությունն այն է, որ Ռուսաստանը հռչակվել է որպես քաղաքակրթական պետություն՝ աշխարհի զարգացման ինքնիշխան կենտրոններից մեկը, որը գլոբալ ուժերի հավասարակշռության պահպանման և բազմաբևեռ միջազգային համակարգի կառուցման գործում կատարում է պատմականորեն ձևավորված յուրահատուկ առաքելություն՝ մարդկության խաղաղ և առաջանցիկ զարգացման համար ապահովելով պայմաններ և հիմնվելով համախմբող ու կառուցողական օրակարգի վրա [12]: Բացի այդ, առանձնահատ-

կույրությունների թվում ի հայտ են եկել հետևյալ նորությունները.

- Առաջին անգամ սահմանվել է ազգային շահերի, արտաքին քաղաքական առաջնահերթությունների, նպատակների և խնդիրների հստակ ամբողջականություն:

- Տրվել է «մեծ տերություն» հասկացության օպերացիոնալացում, որն էապես հիմնավորում է Ռուսաստանի դիրքորոշումը՝ իր համար ակտիվ արտաքին քաղաքականություն իրականացնելու անհրաժեշտության վերաբերյալ՝ ուղղված գլոբալ խաղաղության, կայունության և անվտանգության պահպանմանը:

- Նշվել է կրոնական և աշխարհիկ բոլոր համայնքների համար միասնական հոգևոր-բարոյական ուղենիշ:

- Հռչակվել է միջազգային հարաբերությունների ռեալիստական պարադիգմի շրջանակներում «փափուկ ուժի» քաղաքականությունից հրաժարման մասին՝ հոգուտ իրական, ավանդական ուժի կատարելագործման:

- Անդրադարձ է կատարվել հավաքական Արևմուտքի երկրների կողմից նեոգաղութատիրություն պարտադրելու քաղաքականությանը՝ այս գործընթացին ներգրավելով այն պետություններին, որոնք գտնվում են «գլոբալ Հարավի» երկրների կազմի մեջ:

- Տարածաշրջանային արտաքին քաղաքական ուղղությունների դասակարգումը ձևավորվել է հոգուտ այնպիսի պետությունների, ինչպիսիք են Չինաստանը, Հնդկաստանը, Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի, Աֆրիկյան և Լատինամերիկյան մայրցամաքների երկրները, որտեղ արևմտյան ուղղությունը ցուցադրականորեն (արտաքին լսարանի համար) տեղափոխվել է նախավերջին դիրք, ինչը արտաքին քաղաքականության հայեցակարգերի նախորդ տարբերակներում չէր մատնանշվում [13]:

Ամփոփում

Ամփոփելով կարելի է արձանագրել, որ ժամանակակից Ռուսաստանի արտաքին քաղաքականության էվոլյուցիոն զարգացման ողջ ուղին բաժանվում է որոշակի ժամանակային փուլերի՝

- 1993-2000 թթ. – Ռուսաստանի ձևավորումը որպես խոշոր համաշխարհային դերակատար, որը միջազգային քաղաքական համակարգում ձգտում է զբաղեցնել համապատասխան դիրք՝ ինտեգրվելով «Արևմուտքի համայնք» և ակտիվ համագործակցելով եվրոատլանտյան բոլորի հետ:

- 2008-2013 թթ. – ձևավորվող բազմաբևեռ աշխարհում Ռուսաստանի հռչակումը որպես ազդեցիկ ուժային կենտրոն, որը, դիմադրելով ՆԱՏՕ-ի ընդլայնմանը նպաստող գործողություններին, իր արտաքին քաղաքականությունը

կառուցում է քաղաքական պրագմատիզմի և ազգային շահերի սկզբունքների վրա, ամրապնդում է իր դիրքերը հետխորհրդային տարածքում՝ որպես գերիշխող ուժ, ինչպես նաև զարգացնում ռազմավարական «Եռակողմ» հարաբերությունները ՌԻԿ (Ռուսաստան – Հնդկաստան – Չինաստան) երկրների հետ, ինչը բազմիցս նշվել է Ե. Մ. Պրիմակովի՝ ժամանակակից ռուսական արտաքին քաղաքականության հիմնադիրներից մեկի աշխատանքներում:

- 2016 թվական - Ռուսաստանը որպես պետություն, որը պատասխանատու է գլոբալ խաղաղության ու անվտանգության պահպանման համար և որը ներկայիս գլոբալ քաղաքական կոնյուկտուրայից նոր բազմաբևեռ աշխարհակարգ ստեղծելու համար ձգտում է քաղաքական երկխոսություն հաստատել միջազգային քաղաքական դաշտի բոլոր մասնակիցների, հատկապես համաշխարհային գլխավոր կենտրոնների հետ:

- 2023 թվական – Ռուսաստանը որպես Եվրասիական և Եվրո-Խաղաղօվկիանոսյան քաղաքակրթությանը պատկանող պետություն, որը շարունակում է պատասխանատվություն կրել գլոբալ խաղաղության և անվտանգության պահպանման համար՝ զուգահեռ գործող կարգի հետ կառուցելով և պահպանելով բազմաբևեռ աշխարհի ժամանակակից տեսքը, ինչպես նաև բարեկամական հարաբերությունները խորացնելով այն պետությունների հետ, որոնք իրականում պատրաստ են քաղաքական երկխոսություն ունենալ Ռուսաստանի հետ: Նման նպատակի հասնելու համար հնարավորություններ կարող են ստեղծվել միայն հանդես գալով որպես քաղաքակրթական պետություն:

Ընդհանուր առմամբ, որպես ամփոփում, անհրաժեշտ է շեշտել, որ Ռուսաստանի արտաքին քաղաքականության նոր հայեցակարգում որպես հիմնարար կարևոր հարց մնում է «Ռուսաստան–Եվրասիական և Եվրո-Խաղաղօվկիանոսյան քաղաքակրթություն» կառուցվածքի զաղափարական-փիլիսոփայական բովանդակությունը, քանի որ, ինչպես ցույց է տալիս նմանատիպ նարատիվը, դեռ երկար ժամանակ այն կլինի Ռուսաստանի արտաքին քաղաքական օրակարգում՝ հաշվի առնելով հավաքական Արևմուտքի հետ առկա բարդությունները և լարվածության բարձր մակարդակը, որի հանգուցալուծման հնարավորություններն ու հավանականությունը դեռևս գտնվում են ցածր սանդակի վրա:

Օգտագործված գրականության ցանկ

1. Министерство иностранных дел Российской Федерации. Выступление Министра иностранных дел Российской Федерации С.В.Лаврова на Совещании с постоянными членами Совета Безопасности Российской Федерации, Москва, 31 марта 2023 года, официальный сайт. URL: https://www.mid.ru/ru/foreign_policy/news/1861005/
2. **Дробот Г. А.** О Концепции внешней политики России 2016 года // Социально-гуманитарные знания. 2017. №4. URL: <https://cyberleninka.ru/article/n/o-kontseptsii-vneshney-politiki-rossii-2016-goda>
3. Новая Концепция внешней политики России. На пути к новому миропорядку: лекция Дмитрия Тренина. URL: <https://www.youtube.com/watch?v=OW0jxJaBu2Q&t=2099s>
4. Президент России. Указ Президента Российской Федерации от 02.07.2021 г. № 400 «О Стратегии национальной безопасности Российской Федерации», официальный сайт. URL: <http://www.kremlin.ru/acts/bank/47046>
5. Принципы внешней политики Российской Федерации. URL: <https://shorturl.at/MXzwP>
6. Концепция внешней политики Российской Федерации, 2000. URL: https://www.ng.ru/world/2000-07-11/1_concept.html
7. Концепция внешней политики Российской Федерации, 2008, официальный сайт. URL: <http://kremlin.ru/acts/news/785>
8. Концепция внешней политики Российской Федерации, 2013, официальный сайт. URL: <https://shorturl.at/Rh1bj>
9. Указ Президента Российской Федерации от 30.11.2016 г. № 640, официальный сайт. URL: <http://www.kremlin.ru/acts/bank/41451>
10. Сравнительный анализ Концепций внешней политики России за 2016 и 2023 гг. URL: <https://shorturl.at/3R61N>
11. ИТАР ТАСС. «Как менялась Концепция внешней политики России», официальный сайт. URL: <https://tass.ru/info/17418381>
12. Президент России. Указ Президента Российской Федерации от 31.03.2023 г. №229 «Об утверждении Концепции внешней политики Российской Федерации», официальный сайт. URL: <http://www.kremlin.ru/events/president/news/70811>
13. **Коньков А. Е.** Правила для игры без правил // Россия в глобальной политике. 2023. Т. 21. № 3. С. 54–67.

Сдана/Հանձնվել է՝ 18.01.2025

Рецензирована/Գրախոսվել է՝ 31.01.2025

Принята/Ընդունվել է՝ 07.02.2025